Հավելված - 1
Հաստատվել է Արարատի
քաղաքային համայնքի ավագանու
2017թ. օգոստոսի 1-ի թիվ 9 նիստի
թիվ 33-Ն որոշումով

Արարատի քաղաքային համայնքի 2018թ.
բնապահպանական ծրագիրը

1.Նախաբան

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» 2001թ. մայիսի 15-ի Հայաստանի Հանրապետությոն օրենքի պահանջներին համապատասխան Արարատի քաղաքային համայնքին 2018թ. համար հաշվարկվել է 6,210.300 դրամի սուբվենցիա:
Սույն ծրագիրը մշակելիս համայնքապետարանն առաջնորդվել է Հայաստանի Հանրապետության վերոհիշյալ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, <<Բնապահպանական ծրագրերի մշակման /նախագծման/ մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 27-ի թիվ 197-Ն որոշումով հաստատված կարգի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016թ. դեկտեմբերի 29-ի N 1256-Ա որոշման պահանջներով:
Ծրագիրը մշակելիս հաշվի է առնվել նախորդ տարիներին բնապահպանական վճարներից կատարված մասհանումների հաշվին քաղաքում իրականացված ծրագրերը, ինչպես նաև ներկա պայմաններում առավել հրատապ լուծում պահանջող՝ քաղաքային իշխանությանը և բնակչությանը խիստ մտահոգող հարցերը, որոնց շարքում առաջնահերթ է համարվում ոռոգման ջրով ապահովելը:

2. Ծրագրի նպատակը

Արարատի քաղաքային համայնքի 2018թ. բնապահպանական ծրագրի հիմնական և գլխավոր նպատակը քաղաքի կանաչապատ տարածքները ոռոգման ջրով ապահովելն է: Արարատ քաղաքում՝ գործում է երկու խորքային հոր, սակայն ոռոգման ցանցի բացակայության պատճառով ծառերն ու կանաչ տարածքները ոռոգվում են ջրատար մեքենայով, որն արդյունավետ չէ: Քաղաքում ստեղծվել են նոր կանաչապատ տարածքներ, որոնք ամենօրյա ոռոգման կարիք ունեն:
Ոռոգման ցանցի անցկացումը մասնավորապես կլուծի քաղաքի կանաչ մակերեսների՝ եղած ծառերի ու թփերի պահպանման ու ավելացմանը: Կլուծի ուսումնական հաստատությունների, մանկապարտեզների և քաղաքային հիվանդանոցի կից կանաչապատ տարածքների ոռոգման հարցը:

3. Ծրագրի իրավական հիմքերը

Ծրագիրն իրականացվելու է Արարատ քաղաքի վարչական տարածքում գործող ձեռնարկությունների կողմից արտադրական գործունեության հետևանքով շրջակա, այդ թվում օդային ավազան վնասակար նյութերի արտանետման և սպառման թափոնների սահմանված կարգով տեղադրման, շրջակա միջավայր վնասակար նյութերի և միացությունների արտանետման համար բնապահպանական վճարներից, համայնքին կատարված մասհանումների միջոցներով:
Ծրագրի իրականացման համար բնապահպանական վճարներից տրամադրված սուբվենցիան չբավարարելու դեպքում, նկատի ունենալով ծրագրի հրատապությունը, համայնքն իր միջոցներից լրացուցիչ հատկացումներ կկատարի այդ նպատակի համար:

4. Ծրագրի շահառուները և մատուցվող ծառայությունները

Ծրագրի շահառուներն են համարվում Արարատ քաղաքի ողջ բնակչությունը, ուսումնական և նախադպրոցական հաստատությունները, քաղաքային հիվանդանոցը, քաղաքի և բակային կանաչապատ տարածքներից օգտվող ազգաբնակչությունը: Ոռոգման ցանցի հարցի լուծման շնորհիվ քաղաքում մեծ չափով կխնայվի նաև խմելու ջուր:
Ծրագրի իրականացումը կնպաստի նաև բնակչության առողջության պահպանմանը՝ շնորհիվ կանաչ մակերեսների ավելացման ու միկրոկլիմայի ստեղծման, ինչպես նաև կկանխվի քամու ու տրանսպորտի երթևեկության հետևանքով բարձրացող փոշին:

5. Ծրագրի խնդիրները և դրանց կապը

Ծրագիրը ներառում է երկու բաղադրիչ. կլուծվի բնապահպանական և առողջապահական խնդիրներ: Ծրագրի իրականացման շնորհիվ կլուծվեն քաղաքը կանաչ ու գրավիչ տեսքի բերելու, միկրոկլիմայի ստեղծման, օդային ավազանի և բնակչության առողջության պահպանման հարցերը, պայմաններ կստեղծվեն բնակչության առողջ ապրելակերպի համար բարենպաստ պայմանների ստեղծման, մանուկների և պատանիների մոտ բնության և կանաչ տարածքների պահպանման նկատմամբ հոգատար վերաբերմունքի ձևավորմանն ու դաստիարակմանը:
Կխնայվի նաև այդ նպատակով երբեմն օգտագործվող խմելու ջուրը:

6. Ծրագրի իրականացման եղանակը

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ. համայնքին հատկացվելիք 6,210.300 դրամ բնապահպանական վճարներից կատարվելիք մասհանման միջոցով: Քաղաքում նախատեսվում է անցկացնել ոռոգման ցանց 505 գ/մ պոլիէթիլենային խողովակների միջոցով և այն հասցնել ոռոգվող տարածքներին